

կերտելից մի յանձնախումբ
հազմել որին կր ներկայանա
ապրիլի մէջ.

Իմ կարծիքով այդ յանձնա-
խումբը կարող է կազմվել հե-
տեւեալ անձերից.

.....
և ուրիշներ եթէ կան չէզոք և
ինձ հետ անձնական հաշիւներ
չունեցող և հասկացող, գիտակից
ընկերներ: Իհարկէ ժողովոյ
պարտաւոր է կարգադրել որ մեր
այս ընդհարումներին վերաբեր-
եալ բոլոր օրէկումները սկզբից
մինչև վերջին օրերը դրվեն
բացատրութիւններ լսելու որոշ
ված յանձնախմբի տրամադրու-
թեան տակ:

ՎԱՐՊՈ

Մարտ 16 1906

Պ ա Ր Ի Վ

Ինչ. Հեղ. — Այս նամակի իւր կանթ
պ. Ռ. Չարգարեանի միջոցաւ ու-
ղարկված է շրջանական ժողովին:

ԹՈՒՐԻՔ — ՊԱՐՍԿԱԿԱՆ ՎԷՃԸ

Թուրք — պարսկական սահմանագի-
ւտ վէճը գեռ չէ վերջացած: Արդէն
կա՞յ խնդիր մը Թուրքիոյ համար
որ այնպէս շուտով կարգադրուի: Լե-
ւաթուրքա ջաղաքականութեան բը-
նարանն է խնդիր մը. ինչ որ ալ
ըլլայ, երկարել, միշտ երկարել.
Թէեւ առային վայրկեանն համոզ-
ուած ըլլայ որ տեղի պիտի տայ:

Եւ սակայն այս սահմանագիւտի վե-
ճին մէջ, պարագայ մը մեր ուշադ-
րութեան արժանի է. Պարսկական
կառավարութիւնը քանիցս յեղեղեց
կովկասի հայութեան անունը իր եւ
թուրքին միջեւ պատերազմի մը կար-
ելիութեան պայագային. ինք թէ-
եւ զինուորական շատ խեղճուկ վի-
ճակ մը ունի, բայց կոսկասի հայու-
թիւնը իրեն հետ կը հաշուէ, հազոր-
դեցին քանի մը անգամներ հետագիւ-
նեքը:

Արդ՝ կովկասի հայութիւնը ի՞նչ
պիտի կրնայ ընել պարսիկին, այդ
տեսակ կոտի մը ատեն:

Հաւանական է որ շատ հայ կըտ-
րիճներ, կովկասէն, ինչպէս Թուր-
քիական, երթան Պարսկաստան պար-
սիկ զինուորին միանալու: Ինչպէս
ըով որ բոլոր գծուարութիւնները
վերնան, Ռուսիան աչք գոցէ հայոց
փախուստին, նախ որ պարսիկ կա-
ռավարութիւնը հարկ եղած քանա
կութեամբ գէնք պիտի ՚ի կրնայ հայ
թայթել ատենց, քան որ նոյնիսկ
իրեններուն համար պէտք եղած քա-
նակութեամբ գէնք չունի: Ասկէ զատ
քանի մը հազար հայերու օգնութիւ-
նը, ինչ որ ալ ըլլայ, չի կրնար ա-
պահովել պարսից համար յաղթու-
թիւնը:

Իսկ պարսկական մը պարագա-
յին, մեծ երեւակայութիւն մը ունե-
նալու պէտք չի կայ, հասկնալու հա-
մար թէ ի՞նչ ահաբեւի վրէժխնդրու-
թեան մը պիտի երթարկուին հայերը
թուրքին կողմէ: Արդէն նոյնիսկ
կուտի մը պահուն, անտարակուսելի
է որ 1878 — 79 Ալաշկերտի ու վանի
սարսափները բոլոր հայաբնակ տեղե-
րու մէջ պիտի կրկնուի:

Իտարեալստարար սակայն, այդ

երկու միւսերկան կառավարութիւ-
նեքու մէջ պատերազմի մը կարելի-
ութիւնը աւելի քան անհաւանական
է: Պարսիկը իր տկարութեան գի-
տակցութիւնը ունի, միւս կողմէ
Անգլիա եւ Ռուսիա որոնք այդ տե-
սակ պատերազմի մը ելքէն ամենէն
աւելի հետաքրքրուողներն են, չեն
ուզեր իրաց վիճակը փոխելով զիսու-
նոր փորձանքներ ստեղծել: Եթէ
պարսիկը յաղթելու գոնէ կէս առ կէս,
հաւանականութիւն ունենար, մենք
հայերս ամենէն աւելի ցանկալու է-
ինք այդ պատերազմին շուտով սկը-
սելուն, որովհետեւ Պարսկաստանը այդ
պարագային, կերպով մը. Հայաս-
տանի համար պիտի կատարէր այն
դերը, զոր Պուլկարիան կը կատար-
է Մակեդոնիոյ համար: Ստանանա-
գիւտի ապահովութեան հարց ըսելով,
ի հարկէ եւրոպական համաժողովի մը
տուրք. իբր յաղթող պետութիւն ան
պիտի պահանջէր որ իր հիւսիս արեւ-
մտեան սահմաններու ապահովութեան
համար, որոնք զանազան թուրք ու
քրեւտ աւազակախմբերու սագատու-
կութեանց կենթարկուին խոզաղու-
թեան ժամանակ, կազմուի հայկա-
կան չեղքը ինքնավարութիւն մը,
որպէս զի միանգամ ընդ միշտ վեր-
նան այդ սահմանագիւտի անպատեհ
վէճերը: Եւ մենք վստահ ենք որ
Անգլիան պիտի գիտնար լայնօրէն
օգտուի այս հանգամանքէն իր
պարտքը կատարելու համար: Դրժ-
քախտարար պարսկական յաղթանակ
մը բնա յուսալի չէ. Պարսկաստանը
Դանուբեան ու եւ իշխանութեան մը
չափ ալ գոնէ զինուորական ուժ չու-
նի. եւ ճիշտ Յունաստանի պէս միշտ
պարտուելով. ամէն բան վրայ պիտի
տայ, ու մեզի ալ նոր սղէս մը պի-
տի ստեղծէ:

ԻՐ.

ՍԱՐՈՒԳԵԱՆ ՀԱՐՑԸ

Ճիշտ այսօր տարի մը կը ըլլայ Գեր-
մանիոյ կայսեր այցելութիւնը Մա-
րոցի ամենագիւտ որ Նաւաանգիստը
Դանճէր: Վիլհէլմ Բ. իր այս այցելու-
թիւնով, դեռ 1904ին, Մարոգեան
հարցին համար Յրանսայի եւ Գերմա-
նիոյ միջեւ ծագած վէճին աւելի սուր
կերպարանք մը տուաւ:

Այսօր, ճիշտ տարի մը վերջը կի-
մացնեն թէ՛ Մարոգի խնդիրը հար-
թուած է. թէ Ալժէրիբաի մէջ հա-
մագումարուած միջազգային յանձ-
նախումբը ամեն տեսակէտով համա-
ձայնած է: Ամբողջ տարի մը շարու-
նակ եւրոպան կրակի վրայ կիսկատեց:
Վերջապէս եռամսեայ գիւնանգիտա-
կան հնարագիտութիւնը եւրոպիոյ
միացած Միացեալ Նահանգներու ջան-
քերուն, յաջողեցաւ ելքի ճամբայ մը
գտնել:

Յրանսան 1904ին Անգլիոյ հետ
համաձայնագիր մը կնքեց, որով
Յրանսան Անգլիոյ ամէն ազատու-
թիւն կուտար Եգիպտոսի մէջ գործե-
լու իսկ այս վերջինն ալ նոյն գիջո-
ղութիւնը կընէր Յրանսայի Մարոգի
մասին:

Վիլհէլմ Բ. սակայն ուրիշ սկզբունք
մը յայտարարեց Դանճէրի մէջ. Մա-
րոգեան կայսրութեան անձեռնմխե-
լութիւնը եւ Սուլթանի գերիշխա-
նութիւնը:

Ալժէրիբաի համաժողովը նպատակ
ունէր երկու կողմերն ալ գոհացնել,

ինչ որ ի գաւ. ի հանեց յաջողութեամբ
Յրանսայի թոյլատրուած է Ալժէրի
սահմանին վրայ ազատակամ գործել.
Իսկ ծովեզերքի կողմը գտնուող ու-
տիկանական վարչութիւնը Յրանսա-
յի եւ Սուլթանի կը տրուի Հոլանտա-
կան կամ գուիցերական բաժնի
պատկանող ապա՛յ մը պիտի կարգուի
որպէս վերահսկիչ, անոր պաշտոնն է
հսկել այս վարչութեան գործառու-
թեանը ու ամօ՛՛՛՛ ամօ՛՛՛ Դանճէրի գի-
ւանագիտական ներկայացուցիչներուն
մանրամասն տեղեկութիւն տալ: Յը-
րանսան կը պահէ իր գերիշխանու-
թիւնը նաեւ ծովեզերքի վրայ, միւս
կողմանէ Գերմանիոյ կերպախառնութի-
ւնէն այս գրութիւնը պիտի մնայ ան-
փոփոխ:

Մարոգի մէջ պիտի հիմնուի նաեւ
կառավարական դրամատուն մը ու
որուն հիմնական դրամագումար 12
բաժին պիտի ըլլայ. ամէն կառավար-
ութիւնը բաժին մը պիտի ունենայ.
միայն Ֆրանսական դրամատունը
որ առկա առաջ Սուլթանին փոխա-
տուութիւնը ըրած են, պիտի ունենան
երկու բաժին: Դրամական վիճելի
խնդիրները Ֆրանսական օրէնսդի-
տութեան համաձայն դասելի են սա-
կայն վերաքննելի Զուիցերիոյ մէջ:
Այսպէս Ալժէրիբաի համաժողովը
յաջողեցաւ շատ փափուկ գրութեան
մը ազատել ամբողջ եւրոպան:

ՀՈՎԱՀԱՐԻ ԳՈՂԸ

Միւս Լէյժման, Պոլսոյ օմերիկեան
հիւպատոսին կինը, կողքայ տակաւին
կորուստը իր հովահարին զոր Սուլ-
թանին փոխ տուած էր Եթէ գոր-
ծին ընթացքը նկատի առնենք, նա-
ւային ցոյց մը հազի պիտի կար-
դանար զայն իր գեղեցիկ տիրուհիին
վերադարձնել:

Կերեւի թէ Սուլթանը, որ չափա-
զանց զարնուած է իր ստորագրու-
թեան, հազիւ թոյլ կուտայ իր ձե-
սագիր ստորագրութեան նմոյք քանի
մը մահկանացուներու ցուցնից ու
որովհետեւ Ապտիլ Զամիտ ինքզինքը
թախար որ թագաւորաց եւ մարգարէ
մարգարէից նկատելով իր ստորագ-
րութիւնը իբր իր վեհափառ անձին
սեփական մէկ կտորը կը նկատէ.
այնպէս որ ու է մահկանացու մը չի
կրնար զայն ունենալ:

Միւս Լէյժմանի օր օր օր հովա-
նոցը թանկագին փայտէ մը չինուած
է ու զարդարուած՝ աշխարհի ամե-
նաեղիւնի մարգոց ու կիներու ինք
նագիր ստորագրութիւններով: Պա-
լատական հիւրընկալութեան մը մի-
ջոցին, այնչափ խոսեցաւ հովահարին
վրայ որ, Սուլթանը չի կրցաւ զսպել
զայն ուզելու իր փափագը: Այս էր
Միւս Լէյժմանի փնտրած առիթը. ուս-
տի վայրկեան մը իսկ չի վարանեցաւ
տալու: Սուլթանը մատուցով իր վե-
հափառ ստորագրութիւնը գրեց հովա-
հարին վրայ, Միւս Լէյժմանը աշխարհի
ամենէն վերջանիկ արարածն ընելով:
Հետեւեալ օրը, կէսօրէն առաջ,
պալատական կառք մը գետպանատան
առջեւ կեցաւ եւ տածակապէս բարձ-
րաստիճան զինուորական մը խնդրեց
տեսնել տիկինը եւ անոր հարցուց
Սուլթանին անուամբ թէ կրնա՞ր քա-
նի մը ժամուան համար փոխ տալ
հովահարը, որովհետեւ նորին վեհա-
փառութիւնը կը փափագէր իր ստո-
րագրութիւնը ազամանդէ քարերով
ծածկել: Միւս Լէյժման, միամտու-

թեամբ խնդիրը կատարեց, բայց,
անկից իվեր, դեռ երբէք իր հովա-
հարին երեսը չի տեսաւ: Թէեւ քանի
մը անգամ գրեց Սուլթանին եւ և ա-
նոր ուշադրութիւնը հրաւիրեց թէ
իր առարկան չէր վերադարձուած:
բայց Համիտ ու իր պալատականները
միշտ խուլ եղան Միւս Լէյժմանի պա-
հանջներուն հանդէպ: Պոլսոյ գիւա-
նագետները ափ ի բերան կը մնան,
երբ Միւս Լէյժման անոնց կը
պատմէ իր այս պատահարը: Կը-
սեն թէ Համիտ երբէք չի պիտի ուզէ
որ իր ստորագրութիւնը գտնուի
կեալովուր կնոջ մը քով: միշտեւ իսկ
եթէ ան Միւս Լէյժմանէն տասն ան-
գամ աւելի գեղեցիկ կին մը եղած
ըլլայ, Ամենքն ալ իրեն գիտել կու-
տան թէ: պէտք էր մերժել Սուլթանին
խնդիրը առարկելով թէ տեղ մը
զրկած կամ կորսնցուցած է իսկ կան
ուրիշ գիւնաագէտներ ալ որոնք
Սուլթանին այս արարքը մեղադրելի
չեն գտներ, նկատելով որ իր ստո-
րագրութիւնը կարելի է ընդօրինա-
կելով կեղծել ու հազար կերպ գոր-
ծածել Ամերիկացի կնոջ Սուլթանին
ստորագրութեան հետ կը կորսնցուցէ
նաեւ աշխարհի բազմաթիւ հոգակա-
ւոր անձերու ստորագրութիւնն ալ:

(Պօսթն Փօսթ)

ՎԵՐՉԻՆ ՏԵՆԵՆՈ ԹԻՒՆՆԵՐ

Հանգեղուր, մարտ 3ին

Հանգեղուրի հայր լսելով հայ-թա-
թարական համագումարի մասին եւ
նրա նպատակը, ի սրտէ հոգոց է հա-
նում ու ատում, երանի էն օրին,
երբ հայերի եւ թուրքերի մէջ վրձ-
նահորէն երթեկուցութիւն կըսկսվի.
Ծերունի գիւղացիք օրնում են ժո-
ղովի ներկայացուցիչներին, ասելով,
որքան բարի եւ աղնիւ է նրանց ա-
րածը. նրանք մտնելով մեր նեղ դը-
րութիւնը, մեր անտանելի կեանքը,
այդպիսի մարդասիրական զգացումով
մեր ցաւին դեղ գտնել կուզեն:

Հայր, իրօք հասկացել, զգովել
եւ ատում է թուրք-հայկական ա-
րիւնհեզութեան անիմաստ եւ անը-
պատակ լինելը, իսկ թուրքերը ի՞նչ
են մտածում արգեօք:
Նրանք այժմ էլ բոլորովին հակա-
ռակ են զգում եւ մտածում, նրանց
հաշուով միւսիցեւ այժմ եղածները ոչ
մի նշանակաւ թէն չունեն եւ ապրիլ
ամսից պէտք է Եկովեն յարձակու-
մեքը: Ուստի եւ Սուլթանի մեղքը,
մանաւանդ Լիզրիմ բէզը, իր որդի
Շամիրի հետ, ջուր ու հանգիստ չու-
նէ, անընդհատ այս ու այն գիւղն
են շտապում զինելու, զէնքի համար
փող հանգանակելու: Իլլօրիմ բէզ իր
դատով շատ գիւղեր է մտել ի թիւս
նրանց եւ Ուլլիցի է եկել փետրվա-
րի 28ին Ուլլիցի թուրքական գիւ-
ղը, հայկական սահմանին աւելի մօտ
լինելով (նոյն օրէնսից ցած) իրաւունք
է տալիս Լիզրիմ բէզին անասելի խո-
տութիւններ իւր օրէնսով: Պատուիրում է ամե-
նակարճ ժամանակամիջոցում իւրա-
քանչիւր տուն մի հրացան ձեռք բե-
րելու. պէտք է ձախել, չորամայրում
է, տուն, ապրուստ, կով, եզ, եւ
զէնք, միմիայն զէնք եւ փամփուշտ
ձեռք բերելու, ուրիշ ոչինչ:

Թուրք գիւղացիք այս պարտադիր
հրամանը լսելուց, իրանց սեւ օրե-
րից տրտնջալ եւ դժգոհել են սկսում,
զանազան առարկութիւններ մէջնեղ

բերելով, թէ չենք կարող, միջոց եւ հնարաւորութիւն չունենք քո հրամանը կատարելու: Ինչքան որ կատարուած է, ինչ որ քո անհրաժեշտ է, ինչ որ քո անհրաժեշտ է, ինչ որ քո անհրաժեշտ է...

Գիւղացիք Իլդրիմի երեսից փախուցած են զիւրազանք, ուստի գալիս են հայ շորաններին մօտ, զէպրի մօտ րամասնութիւնը պատմում, իրանց օրը լալիս, իսկ մի մասն էլ փախչում է քաղերը եւ մօտիկ թուրքական գիւղերը ու ձեռքից մի կերպ ազատուած են:

Սրբ թուրք խեղճ գիւղացոց մէջ գրի սեւն ու սպիտակը չը ճանչցողները չը յիշանում գոյութիւն ունեն իլդրիմի պէս անհասներ, որոնք իրանց սեփական շահերի եւ քանակաճութեան շնորհիւ ձեռք կրակներ գիւղացիներին զէնք ձեռք բերելու կը հրամայեն յարձակելի, եւ ոչ մի պայմանով հայերին ցորեն չը տալ եւ ցորենավաճառներին կը տուգանք առնել, ի հարկէ այդպիսիները ներկայութեամբ խաղաղութիւնը մեզ համար մի երազ է, մի երկնառաք շունորհ, եւ հրաշք է թուում:

Թուրքերը երթեւեկուած են միմիայն Գորիս, այն էլ մի ճանապարհով. (Գորիսից Վրացի վրայով) Մախու քերուած են ցորեն, գարբ, ածուխ, փայտ, բրինձ եւ այլն...

Դէպի Շուշի ապրանքատար ֆուրգոններ են գնում-գալիս, Շաքարը ծախուած է 23-25 կ., նաւթը 40 կ. գրկ:

Գիւղերում անասունները մէջ, տարափոխիկ հիւանդութիւն կայ, Փետրուարեան ցուրտը մի կողմից միւս կողմից էլ խոտի, դարմանի պակասութիւնը մեծ սպառնալիք է հղան կոկորի, եղները եւ ոչխարները փչացման, Հիւանդութեան սկզբնական նշանը


հարկները եւ թուլանայն է: Հիւանդութեան վարակուելուն եւ սաստկանալուն նպաստում են ոչ կանոնաւոր գոմերը եւ յարմար փարսխները:

(Մշակ)

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ո Ւ

Ի Լ Պ Ս Ս Տ Տ Ե Դ Ի Ո Յ Ո Ա Չ Գ Ս Յ Ի Ն Ե Լ Գ Ս Ե Ն Ի Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ս Ծ Տ Բ Ո Ւ Ս Ի Մ Ա Ր Ա Ն Ա Ն Գ Ի Ե Ս Ի Ն Փետրվար 10/23 ին

Table with financial data including 'ՅՐ. ՍԵՐ.', 'Տոմսակներէ գոյացեալ հասոյթ', 'Ծաղկեփունջներէ գոյացեալ հասոյթ', 'Պիւֆէէ եւ քօնֆէթիէ գոյացեալ հասոյթ', 'Այլեւայլէ գոյացեալ հասոյթ', 'Գումար 3115.60', 'Մ Ա Ն Ք', 'Սալոնի վարձք 75.—', 'Նուագածուաց 90.—', 'Տ. Թիւֆէնքճեանի 80.—', 'Գարեջուր 30.—', 'Քոթիոն 37.—', 'Քոնֆէթի 26.40', 'Ծաղկեփունջ եւ նուէրներ 75.30', 'Պիւֆէի ծախք 277.85', 'Տպագրութեան 18.—', 'Այլեւայլ ծախք 11.05', 'Գումար 720.60', 'Հոտ հասոյթ 2395 ֆրանք', 'Վառնա. 23 Մարտ 1906'



այլեւս ու աւելի հաստատ քայլերով կը քայլու իսկ ժամկոչը, միշտ սրբատուփի տեսարանին սարսափին տակ, զոր սրբապղծութիւն մը կը համարէր, ցած ձայնով ազօթքներ կը մոլտար: Մեթ ընդ մերթ ետին կը դառնար զեղնած, երկչոտ այքերով կարծես զայրոյթը՝ յայտնելու համար աչկ կըրին զէմ, որ այնքան համարձակօրէն կը վարուէր սրբատուփին հետ: Երբ գիւղը մտանք, զոնչանը հնչեցուց, տըռռ...լէ'ն... տըռռ...լէ'ն... Դուռները ճոնչեցին կօշիկներու աղմուկ մը սկսաւ ելլել: Ստուերներ անցան գացին լուսաւորուած պատուհաններու ուղղակիւններուն մէջէն զէմքեր սկսան երեւիլ... տըռռ...լէ'ն... տըռռ...լէ'ն: Երկու շուներ երկարօրէն հաչեցին, ուրիշներ անոնց պատասխանեցին: Ու զոնչանը կը հնչէր տըռռ...լէ'ն, տըռռ...լէ'ն...

Հիւանդին տան առջեւ կառք մը կեցած էր, ու յայտն մէջ տեսայ հայրս որ ձիուն փոկը կը քակէր կառքը տեղաւորեց, ճամբան բաց ձգելու համար, ու լսեցի որ զարմացած ձայնով մը կըրէր. — Սա նայէ՛, մեր Այպէրին է... նայէ՛, Ժիւն է՛: Յետոյ գնաց խառնուեցաւ անցորդներու ամբոխին որ խռնուած էր ալոռլէ'ններու զոնչիւնէն:

ՆԱՍՏԱՆՈՒՓ

Կարա Սլիվին.—Պ. Սարգիս Վարդանեան, Ձեր ցոյց տուած հասցէին ուղարկուած բոլոր թերթերը փոստէն ետ վերագարձուած են, թերթերը դադրեցուցած ենք մինչեւ ձեր կանոնաւոր հասցէ տալը:

Մեր ՁԸ ՎԱՍՐՈՂ ԲԱՒԱՆՈՐԴՆԵՐԸ կամ վճարեն իրենց պարտքերը եւ կամ դադարին թերթ ստանալէ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ԴՊՕՇԱԿԻ վերջին թիւը հետեւեալ տեղեկութիւնները կը պարունակէ Առվառինճի անցեալ նոյեմբեր ամսոյ կտորածի մասին:

«Առկանքեր ամսի 1 ին շարքի օրերը նոր պիտի բացէր արշալոյսը՝ յանկարծ Առվառինճի գիւղը կը պաշարէր սարէն ձորէն եւ գիւղացոց ելեւմուտքը կարգիւ Պայարուներն էին նախ բազմաթիւ թիւրք զօրքեր մէկ վաշտ Մուշէն եւ Առաղ ու Ղարց գիւղերու մէջ մնացած զօրքեր: Առաքելոց վանքի եւ Սասնի գիւղի զօրքեր իրենց սպաներով եւ Մուշէն հասած հազարապետով եւ ամբողջ ոստիկանութիւնը իրենց պետերով՝ արած հրամանին վրայ կը հասնին հոն. պալաքցի, խուժեցի, զեղձմարցի քիւրդ աշխրէթներ կրօնամուկ հաճի Ֆիրօջի հետ: Թլայ չէլխերը իրենց արբանեակներով, մահպուպանցի քիւրդեր, Գրգազով քրդեր, Մուշէն գիւղեալ թուրքեր առաջնորդութեամբ Տուրսուն եւ Արիֆ անուն թուրքերու եւ այլն եւայլն: Այս բազմութիւնը, որ մինչեւ ժամը երկուքը 3000 է անցած էր՝ պատրակելով թէ ձեր գիւղը ֆէլայի կայ, յանկարծ հազարաւոր հրացաններու պայթիւններով ու զոռու գոչումով գրոհ կուտան գիւղի վրայ: Կը յարձակին. ջարդ եւ հրդեհ վայրկենապէս կսկիւին. շատ քստմեղի

շատ անուր խոզութեամբ խուճապը եւ իրարանցումը սկսած էր գիւղին մէջ, ուր 120 է աւելի թշուառ հայ ընտանիքներ արգելափակ մահաւան կը սպասէին... որոտումները գիւղերնեքու եւ թուրք խուճանի գոռուած գոչումը, ժողովրդի սարսափելի վայնասունը սարերը կը թնդացնէին, բայց անելի կտորիչներուն երբէք գոթ ու կակիծ չէին ազդեր: Դրոհը գիւղը հասնելուն գիւղի շուր կողմէն զօրքերը հրդեհը բռնկեցուցին եւ հայ արեան ծարաւները ձեռնարկեցին անմեղ ու անտէր հայ ժողովուրդը ջարդելու, որը ողջ սղջ հրդեհներուն կուտային, որը կը յոշուէին որը զնդակաթար կը տապալէին անխնայ առանց սեռի եւ տարիքի խտրութեան: Ջարդը կը տեւէ մինչեւ հետեւեալ առաւօտն ալ, թէ գիւղը թէ կայրուեւ եւ թէ արտերու եւ մեծագոյն մասը առենբու մէջ:

— ԵՐԵՒԱՆԻ դատարանին առջեւ սեղի ունեցեր է, անցեալ ամառ սահմանադրուելու անցնելու առան, հայ դաշնակցական խումբի եւ թուրք-ոռուական միացեալ զօրքերու միջեւ եղած ընդհարումին պատճառաւ ձերբակալուած յեղափոխականներու դատը:

Դատարանին առջեւ վկաները խոստովաներ են թէ իրենց սպան հրաման ըրած է որ հրացան արձակին խուճանի հետ փախչող կիներու եւ տղոց վրայ, նաեւ թէ ինքն սպան շնորհակալութիւն յայտներ է ոռու սպաներու անոնց ցոյց տուած վայրերնի անկողնութեան համար: Թէ եւ ընդհանուր դատախազը պահանջեր է որ ամբողջն ալ ըստ պատճառական օրէնքի մահուան դատապարտուին, բայց ամբաստանեալներու փաստաբաններուն արտասանած պաշտպանողական շատ յուզիչ եւ փաստացի ճանաչող վրայ դատաւորները բողբոն ալ անպարտ արձակեր են:

— ԵԳԻՊՏՈՒ ՀԱՅ թերթերը կը հաղորդեն թէ Պոզոս փաշա նուպար ու

ԱՊՊԵ ԺԻՒԼ

ՄԱՍ Բ

(Հատուածներ) (Շար. 788 թ/ւէն)

Վերջապէս կրցաւ ոտքի ելնել, ու սկսած սրբատուփը փնտռել: Ժամկոչը իր ձեռքի տուփը ու պղնձէ գունչանը գետինը դրած էր, ու բռնորովին սոգունած, այքերն ուռած, լապտերը, փոսին եզերքը, հոդին հաւասարութեամբ կը պատցնէր: Բիչ մը ժամանակ այս զործողութիւնը կաւարելէ ետքը, վերջապէս խոտերուն վրայ տարածուող կարմիր լոյսին մէջ, նշմարեցինք սրբատուփը որ անաշարտ մնացած էր ու ամփոփուած իր ծածկոցին մէջ: Վերցուցի, սարսուռ մը զգալով, Կախարչը չէր շարժուած: Զօրեղբայրս կամայ մը ծածկոցը վերցուց, ու նշխարէր տեսնելով անօթին տակը:

— Երթե՛նք, ըսաւ: Մնաս մը չի կայ... ճամբայ ինձանք...

Մեր աջակողմին, ուղղութեամբ սկսած էին երեւալ ալդէն քաղաքի տուններու մօտ չըջագծերը, ու խաւարը ծակող լոյսի նշոյլներ: Զօրեղբայրս այնքան ուժգնօրէն չէր հետար

վերևը հեղկական գորգերուն վրայ: Զօրեղբայրս դռան սեմին վրայ կանգ առաւ, ու մահուան տեսարանին առջեւ, աղօթքի այս ցուցադրումին հանդէպ, իր զէմքը յանկարծ այլակերպեցաւ: Վշտագին գիւղութիւն մը իր լույսը իր բերանը որ պահ մը առաջ կը հայհոյէր Գիւթէ վեհափառ պայծառութիւն մը թափանցեցին իր աչքերը որ վայրկեան մը առաջ բարթիւնէն վայրագօրէն զուրկ կը ժայթքէին: Կամքին խիստ ու հզօր մէկ ճիգով, լոնցուց իր կուրծքը կրծող, իր կոկորդը պատառուցաւ, ու սղնիւ շարժումով մը իր ձեռքը տարածելով, հանդարտ ու բարեմոյն, յառաջացաւ ողբալի սենեկին մէջ:

— Սաղապութիւն թող ըլլայ տանս վրայ, ըսաւ քաղցր ու կարեկից ձայնով մը:

Ժամկոչը պատասխանեց.

— Եւ ամենայն բնակչաց նորա Յետոյ սրբատուփը սեղանին վրայ զնելով, օրհնեալ ջուրով խաչակնքելէ յետոյ, արբան շարունակեց:

(Շարունակելի)

յոշած ըլլալով յառաջիկայ ուսումնական տարեշրջանին տասը հայ երիտասարդներ իր ծախքով պետական բարձրագոյն վարժարանաց մէջ կըրթեցին, հրաւէր ուղղուած է փափագողներուն որ փութան մասնակցելու մրցական քննութեան մը, որուն արդիւնքին համեմատ պիտի ընտրուին տասը պատանիները:

Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի
Ի ՆՊԱՍՏ ԿՈՎԿԱՍՍԱՆԱՅ
Ս. Ր Կ Ա Մ Ե Ա Լ Ն Ե Ր Ո Ւ

ԳԵՂՈՒՆԻՆ իր ծանօթ ծրագրով, իրեն յատուկ գեղարուեստական և գրահան բովանդակութեամբ սկսած է հրատարակել, և ընդ փոյթ լոյս կը տեսնէ վեհնեակի Մխիթարեան հարց տպարանէն: Կովկասահայ մեծ զանգեւոր փութկոտորէն սփոփեց արկածեալ թրքահայը: Կիսա ինքն է լացողը, ինքն է վիհաւորուածը, և ինքն է սովի և կրակի մատնուածը: այդ մեր հայութեան ամենէն ազնիւ զաւակներուն հիմա ձեռք կուտայ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ, ձեռնպահ չի մնար և Գեղունին, որ կովկասահայուն սրտին մէջ համակրանքի բաժին մ'ունի: Ս. Ղազար որոշած է 1000 օրինակ Գեղունի (1906) փութացնել Թիֆլիզի ինպատ կովկասահայ արկածեալներու յանձնաժողովին: Ընդհանուր հայութեան այն ամէն անհատ որ տառապելներու գանձանակին մէջ համեստ գումար մը—10 Ֆր. նետելու կարողութիւնն ունի, ցանկալի է որ դիմէ այդ յանձնաժողովին ուսկից փոխարէն իր բարեգործութեան, կը ստանայ նոր հրատարակելի Գեղունին, որուն կատարելութեան համար թերթին միևնոյն վարչութիւնը ամէն ճիգ ու ջանք կը թափէ և աւելի՛ եռանդով:

Գեղունին այս անգամ ևս ունի յայտարարութեանց բաժին, որուն մասնակցելու կը հրաւիրենք մեր նշանաւոր ամէն կարգի վաճառականները:

Գեղունիի բաժնեգրին է 10 Ֆրանկ, Գեղունիի համար լուսանկարներ, յայտարարութիւններ և նամակներ յղել մեր սովորական հասցէին:

Է մը բ մը բ Ս. Ր մ է ն ի է ն Ս. Ղազար ՎՆԻՍ (Իթալիա)

Որքան ընկերութեանս պատանդամներէն ուսանք անցեալները անձամբ Դործ. Ժողովոյս դիմած էին ընկերութեանս արդի վիճակի նկատմամբ տեղեկութիւն պահանջելու: Ժողովս ուրախութեամբ պէտք եղած տեղեկութիւնները տուաւ: Դործ. Ժողովս որոշեց ներկայիս յայտարարել ընկ. պատ. անդամոց թէ, գործ. Ժողովս արգէն սկսած է ընկերութեանս ամբողջ հաշուեկիտն պատրաստել եւ քիչ տեսնէն պիտի ներկայացնէ գումարուելիք ընդհ. ժողովին պարտն ու պատշաճը տնօրինելու համար:

Մնանք յարգանքով
Ի դիմաց Դործ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Ա. Չորպահանէլեան Յ. Կ. Ծանկիւլեան
20 Մարտ 1906
Վառնա

Գրաշարի հիւանդութեան պատճառով անցեալ շրջաշաբթի անարժուժ չի հրատարակուեցաւ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բ. Դուռը հասած լուրերու համաձայն, էրզրումի մօտակայքը, Տէրպիմս անուն լեռնավայրին մէջ ծագած շարժումը հետզհետէ կը ծաւալի. տեղ տեղ հայերու կոտորած եղած է:

Այս սարսազը գեղիկ լուրերը պալատէն կը ներկայացուին, սրպէս արձագանգ քիւրտերու դէմ առնուած խիստ միջոցներուն: Սակայն քաղաքական շրջանակներու մէջ ասոնց իսկութեան շէն հաւատար, որովհետեւ շատ կասկածելի է թէ մինչև Ասիական այս խուլ անկիւնը հասած ըլլայ, ազդեցիկ քիւրտ անձնաւորութիւններու արքայութեան լուրը:

— Սամոսի կացութիւնը շատ ծանր է: Իշխանութիւնը բուն ապստամբութեան մէջ է, և եթէ իշխան վիթնու էֆէնտին ետ չը կանչուի, ընդհանուր ապստամբութիւն կը սպասուի. պետութեանց միջամտութիւն մը յառաջ բերելով:

— Անգլիական գեսպանութիւնը կը պնդէ, թիւրք զինուորներու Խապէն ետ քաշուիլը: Բ. Դուռը կը պատասխանէ թէ՛ Ահապարի և Պիլոյ միջև եղած հեռագրական գիծը վնասուած է, ինչ որ Խապէն ու է լուր առնելու արգելք կը ըլլայ:

Անգլիական գեսպանութիւնը 6 օր եւս ստիպուած է սպասել, որպէսզի կարենայ այս հեռուոր երկրի հետ յարաբերութեան մտնել: Բ. Դուռը միանգամայն կը յայտարարէ թէ՛ Լատվան փաշայի սպանման առթիւ եղած քիւրտերու խմբովին արքայութեան մտահոգութեան կը մատնէ:

— Անգլիական գեսպանը որոշած է այնպէս որ օր առաջ Ահապարի հարցը վերջանայ: Սոյն վայրին պատահական գրաւումին համար հարկ եղած հրահանգը զրկուած է, հրամանը տրուելուն պէս գործադրումը տեղի պիտի ունենայ:

— Պիլոյ քաղաքացիներու փաշայի սպանութեան կազմակերպիչը եղած է Երզրումի արարողացի Ապտուլ Քէլաք պէյը: Իսկիւտարի հրամանատար Ալի Շամի փաշա փորձած է սպաննիչը ձերբակալուիլ ազատել:

— Պիլոյի համ Տէլլի բոսդարժանահաւատ ազբիւրէ կիմանայ թէ՛ բաւականաչափ Գերմանացի սպաներ թուրք բանակին մէջ պաշտօն ստացած են, շնորհիւ վիճակէ կայսեր միջամտու-

թեան. հինգ տարուան ժամանակամիջոցի մը համար ուրիշ սպաներ ալ պիտի վարձուին: Ասոնց մէջ զատ ուրիշ 9 սպաներ մօտ օրէն Պիլոյ պիտի մեկնին, զինուորական նախարարութեան մէջ պաշտօնի գլուխ անցնելու համար:

— Պիլոյ քսէլէ կիմացնեն թէ՛ Ժորիսի պաշտպան, ազատական երեսփոխան Լորանը, յայտարարած է թէ՛ Բարիզ եղած ժամանակ Գլեմանտին եւ Բրէսսանէն զինքը վստահեցուցեր են որ Պիլոյ ֆրանսական գեսպանութիւնը ամէն միջոցի գործ պիտի դնէ ժորիսը մահուանէ ազատելու համար:

Ո Ւ Ի Ո Ւ Ա

«Պէրլինէր Խակէպլաթ» թերթագրութիւնն ստացուած վրդովիչ լուր մը կը հրատարակէ, որ եթէ շիտակ ելնէ, կրնայ մրջագային անհամաձայնութեան տեղի տալ:

Այս լուրին նայելով, ռուսական կառավարութիւնը որոշած է Թիւրքիան պաշարել, որպէսզի կարենայ հրազէնի մուտքը արգիլել: Միևնոյն ստեն Թիւրքիան մէջ շատ մը խուզարկումներ պիտի ըլլան:

— Ռուս լրագիրը կը հաւատէ թէ, վիթէի իշխանութեան ինչպէս, եւ և մտազէտ դրամաւէր Մէնտէլընի Յարին հետ ունեցած ունկնդրութեան հետեւանքն է: Սենտելընը, ունկնդրութեան ժամանակամիջոցին ցարին յայտարարած է թէ՛ Ռուսիոյ անունը ու վարկը բարձրացնելու համար արտաքին աշխարհի առջև, իշխանութեան գլուխը գտնուող անձնաւորութեանց պաշտօնէ հեռանալը անհրաժեշտ է:

— Ինթերպոլիցի կը հեռագրեն թէ՛ ներքին գործոց նախարար Դուրնովն մօտ օրէն պիտի հրաժարի իր պաշտօնէն: Անձնական խօսակցութեան մը ժամանակ ան ըսած է եղեր թէ՛ «այլեւս Ռուսիան խաղաղած է, ես իմ պարտքս կատարեցի, հիմայ կատարեալ խղճի հանդարտութեամբ կրնամ պաշտօնէս քաշուիլ»:

— Սոլովո Ռուզիէ լրագիրը Ինթերպոլիցի կիմանայ թէ՛ քիչ օրէն զօրավար Շտասելը պիտի ձերբակալուի որովհետեւ եղած քննութիւնը ցոյց տուած է թէ՛ ան Բորգ-Արթուրը ճարտարներուն յանձնար է 3,000,000 ռուպլի փոխարէն:

— Մոսկովայէն կը հեռագրեն թէ կովս Սգրականովէն հիմնարկուած ճարտարարուեստական վարժարանի թանգարանին մէջ ձեռուած դժոխային մեքենայ մը պայթեցաւ, ու ոչնչացուց շատ մը նկարներ և գեղարուեստի սեփա-

կան իրեր:

— Թիւրքիան մէջ տակաւին կարելի չէ եղած խաղաղութիւնը վերահաստատել, հետզհետէ խրաւովութիւններ կը սաստկանան:

Ինթերպոլիցի օր օգնութիւն կը խրկէ այնտեղի ոստիկանութեան: Անցեալ շաբթու Թիւրքիան ուղարկուած է զինուորական շոգեկառքով մը 2000 հոգի և 18 թն. գանձով: Իսկ հինգշաբթի օր երկրորդ շոգեկառքով մը նորէն հոն փոխադրած է 14 թնգանձով և 30 վազօն զօրք:

— Կովկասէն հասնող լուրերու համաձայն Արեւանի նահանգին մէջ ապստամբութիւնը հետզհետէ կ'ընթացի: Տեղւոյն վրայ ուղարկուած զինուորները մատնուած են անյաջողութեան: Վրաստանի լեւնային բաժնի մէջ ծագած են խմբովին ապստամբութիւններ, կէլէնճիքի մէջ բուն յեղափոխութիւն կը տիրապետէ:

— Վարչապետէն հասած վերջին լուրերը կը հաւաստեն թէ, տեղւոյն յեղափոխական կուսակցութիւնը ընդհանուր քաղաքական գործադու մը կը պատրաստէ: Սեղափոխականները այսպէս սով կուզեն արգելք հանդիսանալ նոր կնքուելիք փոխադրութեան:

— Պէրլինով մէջ յեղափոխականները ռուս մը նեաած են: Երկու ոստիկան մեռած և երկուքը ծանրապէս վիրաւորուած են:

ՍԵՐՊՈՒ

ՊԱՐՍՍՈՒՍԱՆ

«Պէրլինով Լոզալ Անցայկէր» լրագրին Թէհրանէն կիմացնեն. մոլեռանդ պարսիկ բժիշկ Գուզէմա, Սէխաւանի բնակչութիւնը ներպայցի բժիշկներու գէմ յարուցած է, որպէս թէ այս վերջիններս ըլլային ժանտախախտարածողները: Ամբողջ հիւանդանոց մը թալլած, գեղարանները խորտակած և յոյն իսկ անգլիական հիւպատոսարանի վրայ յարձակած է: Հիւպատոսին ու բժիշկըն ձեռք մը քաշեր են: Մաքսստունը, Նէքրասով ռուս հիւպատոսը ազատած է, ժամանակին գողաքներուն հոն հասնելովը: Յանցանքը Խորասանի կուսակալին է, որ կառավարութեան տնօրինութեանց գէմ կը գործէ և իր կամքով Սէնդան զրկած է բժիշկ Գուզէման, ապացուցելու համար թէ հոն ժանտախաղ չկայ, միայն գոյութիւն ունի Երոպացիներու խելապատակին մէջ: